

ՀՀ ՏԿԶ նախարար Սուրեն Պապիկյանի մոտ ՀՀ մարզպետների մասնակցությամբ կայացել է աշխատանքային խորհրդակցություն

08.05.2019



ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը մայիսի 7-ին աշխատանքային խորհրդակցություն է անցկացրել ՀՀ մարզպետների մասնակցությամբ:

Խորհրդակցությանը մասնակցել է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են մարզային և համայնքային արդիական նշանակության հարցերի լայն շրջանակ:

Մինչ բուն օրակարգին անցնելը, նախարար Պապիկյանն արդյունավետ է որակել Արարատում անցկացված ներդրումային գործարար համաժողովը և համոզմունք հայտնել, որ մարզերի գործարար միջավայրի ու ներդրումային կլիմայի բարելավմանն ուղղված այս նախաձեռնությունն իր առարկայական դրսևորումը կստանա տարբեր բիզնես նախագծերում:

Ըստ Սուրեն Պապիկյանի՝ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի վերլուծությունները ցույց են տվել, որ 2019թ. առաջին չորս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ եկամուտների հավաքագրումն աճել է շուրջ 2 մլրդ դրամով կամ 2,5 տոկոսով: Նախարարը նշել է նաև, որ չնայած ընդհանուր դրական միտումներին, կան որոշ ռիսկային համայնքներ, որոնց արձանագրած արդյունքները ցածր են միջին հանրապետական ցուցանիշից: Խնդրի կարգավորման և բյուջետային մուտքերի ավելացման նպատակով, Սուրեն Պապիկյանի համոզմամբ, անհրաժեշտ է տեղերում հասցեական աշխատանք տանել համայնքների ղեկավարների հետ:

Նախարարը մարզպետների ուշադրությունն է հրավիրել համայնքների կողմից ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրային հայտերի ներկայացման ժամկետների ու փաստաթղթավորման գործընթացի վրա և հորդորել խստագույնս պահպանել սուբվենցիայի տրամադրման կարգով հայտերին ներկայացվող բովանդակային և տեխնիկական պահանջները:

Անդրադառնալով համայնքների միավորման գործընթացին՝ Սուրեն Պապիկյանն անհրաժեշտ է համարել տեղերում նախապես իրականացնել դաշտային աշխատանքներ, շփվել բնակչության հետ՝ հայեցակարգի հիմքում դնելով միավորվող համայնքների աշխարհագրական դիրքի, կենցաղմշակութային մտերմության, ավանդութային առանձնահատկությունների համադրումը:

Աղբյուրը՝ mtad.am, 07.05.2019